

մէջ հաստատած էր իր Աթոռը, ութամենյ պաշտօնավարութիւնէ ետք արկածով կը վախճանի, 1113 մայիս 26ին, Վարդաներ զիւղին մօտ, և կը թաղուի Շուղրի Վանքը (Առ. էջ 411):

Իր մահէն անմիջապէս ետքը ժողով կը զումարի Կարմիր Վանքի մէջ, և իր մօրաբրոջ տղան, Ապրան Պահլաւունիի որդին Գրիգոր, կը ձեռնազրուի Կաթողիկոս (Առ., էջ 412):

Երեք տարի ետքը, Քեռունի Հայկական իշխանութիւնը դժբախտ պարագաներու տակ կը ջնջուի և Գրիգոր Պահաւունի յարմար կը դառէ Հայրապետանոցը Կարմիր Վանքէն փոխազրուի իրենց տոնմբն սեփական Ծոփք Դղեակը, որ կը գանձէր Տէուք զաւարին մէջ, Այնթապի հիւսիս արև մըտեան կազմը:

Առկէ ետքը պատմութիւնը ժամանակ մը կը լուէ Կարմիր Վանքի մասին, որ քաղաքական և հեղեղացական իշխանութեանց խնամածու հոգաւարագիւնէն զրկուած՝ հետզհետէ կ'անչքանոյ անշուշտ: Եւ իր 1136ին նորէն կը յիշուի այն՝ իր զիխուն եկած մեծ դժբախտաւթեան մը պատճառով է միայն Վանքի այդ տարին Մահմետ Առլթանը կը կողոպտէ Կարմիր Վանքը և կ'այրէ: Իր տարած թանկազին իրերուն մէջ յատկապէս յիշուած է գեղեցկահիւս յարինուածով զուռ մը (Պր. Երէց, էջ 463):

Տանիեակ մը տարիներ զարձեալ լուսթիւն, և անա 1148 յունուար 30ին, Կարմիր Վանքի Ա. Յարութիւն Եկեղեցին դժբէթի խաչը կրակի պէս կը փայլի ինչ որ կը համարուի շարագուշակ նշան քրիստոնեաներու համար (Պր. Երէց, էջ 504):

Այսպէս առուպային պայմանութիւն մը միայն կ'ունինայ Քեռունի Կարմիր Վանքը, պահ մը իմացական օրբանը հանգիստանալով՝ մեր Եկեղեցին համար անմոռանալի զառնուու կոչուած մեծ հայրապետներու, և ապա կը մանէ անյայտութեան ծոցը, ուրկէ յանկարծ զուրուեկած էր բարերաստիկ որ մը

Ե. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

Ս. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԻԿԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՒՅԹ - ԲԵՄԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՒՅԹ

● Կիր. 4 Օգոստ. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ս. Պատարազի աւարտին կատարացուեցաւ հոգեհանգստեան պաշտօն ի Հանդիսան հոգուոյն նորորդ հանգուցեալ Ամերիկանակ Տիրամայր Ազնիւ Գարիկեանի մօր Ս. Ուրախոս Միարան Հոգչ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեանի:

● Կիր. 11 Օգոստ. — Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Աւէլ Արդ. Գեղատիսաւուն: Ս. Պատարազէն ետք կատարուեցաւ Հապուզօրհնէքի արարողամբն, նախագահութեամբ Լուսաւորապետ Գիրը. Տ. Հայրիկ Եպոս Առլանեանի:

● Բչ. 12 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Կուսի Վերափոխման տօնը կանխող ամէնորեայ հանդիսաւոր Ս. Պատարազներու մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կամիստանի Ա. Առուուածածնայ Տաճարին մէջ, Տիրամայր Ս. Գերեզմանին վրայ:

● Կիր. 18 Օգոստ. — Բարեկենդան Ա. Առաւածածնի պահոց: Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կամիստան Արդ. Պատարազի աւարտին վերականգնուած առաջարարութեան ըլջանը մատուցին իրենց անդրանիկ Ս. Պատարազներու Մայր Տաճարի Աւագ Աւելանին վրայ:

● Դչ. 20 Օգոստ. - Եւր. 23 Օգոստ. — Նորընձայ Տ. Գանիկէ, Տ. Մամուէլ, Տ. Վահան և Տ. Տաթի արեգաները վերջացուցած ըլլաւով իրենց քառասունքի ապաշխարութեան ըլջանը մատուցին իրենց անդրանիկ Ս. Պատարազներու Մայր Տաճարի Աւագ Աւելանին վրայ:

● Ուր. 23 Օգոստ. — Նախատօնակը պաշտըցուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Լուսաւորապետ Գիրը. Տ. Հայրիկ Եպոս:

● Եւ. 24 Օգոստ. — Տօն Շալակարի Ս. Էջմիածնի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Ժամարարն էր Նորընձանեաներու վարժին ու ուսուցիչը՝ Հոգչ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան: Բայս սպասութեան, նորընձաները կը սպասարկէին Ա. Պատարազի խորհուրդին:

— Կէսօրէ ետք ժամը 3-30ին, Գիրը. Տ. Սուրէն Արքեպոսի գլխաւորութեամբ, Միարան թիւնը ինքնաշարժեալ մեկնեցաւ Գիմանի ձորը ու Հըրաշափառով մուտք գործեց Ս. Առուուածածնայ Տաճար, ուր զատուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծանդէս համարնակը: — Իրինապէմին նոյն Տաճարին մէջ պաշտուեցան Եկեղեցէի և Հակման կարգիր, և ապա առաւուան ժամերգութիւն: Ուշ գիշերին, Միարանութիւնն ու

ներկայ հաւատացեալներ վերադարձն Մայ-
քավանիք:

● Կիր. 25 Օգոստ. — ՎերևՓՌԱՅԻԱՐԵՆ Ա. ԱՍ-
ՏԻՈՒՆՆԵՐՆԵՐ; Առաւատեան ժամը 7:30ին, Գերշ.
Տ. Սուրբէն Արքեպոսի գլխաւորութեամբ, Միա-
բանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Գեթ-
ահմանի ծորը ու Հրաշափառութ մաւաք գոր-
ծեց Ա. Առաւատածնեայ Տաճար, ուր Տիրամօր
Ա. Գերեզմանին վրայ օրուան հանդիսուար Ա.
Պատարագը մասոյց և քարոզեց Գերշ. Հան-
դիսագետ Արքագանը, բնարան անհնալով
Աղաքէն գուր տաճար Աստուծոյ կենդանոյ
էր, յորդորելով, իր իօսքի վերջաւորու-
թան, հայ մայրերը որ Ա. Կոչի օրինակին
համեմով քրիստոնէական առաքինութեաննե-
րով ու բարեկատաւութեամբ մեցնեն իրենց
զաւակները: Ա. Պատարագէն ետք կատարու-
ցաւ Անգաստան, նախագահութեամբ Առաւ-
արագետ Գերշ. Տ. Հայրիկ Եպոսի:

— Կէսօրէ հարք, Մայր Տաճարին մէջ պաշ-
տուեցան Անգաստան, Ժամերքամիւն և Առա-
խատօնակ, նախագահութեամբ Գերշ. Տ. Սու-
րբէն Արքեպոս Քէմհանինի:

● ԲՀ. 26 Օգոստ. — Ֆիւատիկ մեռելոց: Ա. Պա-
տարագը մատուցուեցաւ ի Ա. Ֆիւագիր: Ժա-
մարան էր Հոգէ. Տ. Դանիէլ Արդ. Եամէեան:
Ա. Պատարագէն ետք, Լուսարարապես Գերշ.
Տ. Հայրիկ Եպոս Ալանեան նախագահուց հա-
գիւանգաստեան կարգերուն, նախ Մայր Տաճա-
րին մէջ, ապա Տաճարի գաւիթը և Զամ-Թագի
գերեզմաննոցին մէջ:

● Եր. 31 Օգոստ. — Է. օր Վերափ.: Բառ սո-
վորութեան, Ա. Պատարագը մատուցուեցաւ
Մայր Տաճարի Ա. Առաւատածնի խորանին
վրայ Ժամարան էր Հոգէ. Տ. Վահան Արդ.
Թօփալեան:

ՊԱՇՕՆԱԿԱՆԻՑ

● Ուր. 2 Օգոստ. — Կէսօրէ հարք ժամը 5ին,
Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Եպոս, Հոգէ.
Տ. Կոմիտաս Արդ. և Տիար Ա. Անգրեստեան,
ի շարս այլ համայնքներու հոգեւոր պետերու
ներկայացուցիչներուն, Յոպպէի դրան առջե

դիմաւորեցին քաղաքիս Ասորի համայնքին
նոր եպիսկոպոսացած Հոգեւոր Գետը՝ Տ.
Յուլիոս Պուլոս Ճէլէֆ, և ապա ներկայ եղան
իրենց վանքին մէջ կատարուած բարիդալրս-
տեան բնդունելութեան:

● ԲՀ. 5 Օգոստ. — Եռէտական Ընդէ. Հիւ-
պուտուունի կողմէ, իրենց Հիւպուտուուրանին
մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան
Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Եպոս, Հոգէ.
Տ. Կոմիտաս Արդ.

● ԳՀ. 6 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Ասորոց
նորագուակ եպիսկոպոսին ընորհաւորութեան
գացին Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Եպոս,
Աւագ Թարգման Հոգէ. Տ. Կոմիտաս Արդ.,
Կալուած աց Քարտուզար Տիար Կարպիս Հիւ-
դրւեան և Ա. Տիգեաց պաշտօնեայ Տիար Կա-
րպագետ Անդրէասեան:

— Կէսօրէ հարք ժամը 5ին, Լուսարարագետ
Գերշ. Տ. Հայրիկ Եպոս, Աւագ Թարգման Հոգէ.
Տ. Կոմիտաս Արդ. և Տիար Կարպիս Հիւդրւեան
ներկայ եղան Լատինաց Պատրիարքարանի
եկեղեցւոյն մէջ, Փարիզի մէջ նորոգ վախ-
անաւալ տեղւոյս Ֆրեդրիկու Վարժարանի
Ցնօրին Ֆրանսուա Լուիդի հոգուցն համար
կատարուած հանդստեան պաշտօնմանըին:

● Կիր. 11 Օգոստ. — Ամենա. Ա. Պատարիարք
Հայրը հեռագրավ մը ընորհաւորեց նորին Վիճ.
Հիւէկին Թագաւորի Քահակալութեան 11րդ
տարեկարգը:

● ԳՀ. 13 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Ասորոց
նորագուակ եպիսկոպուուը, իր հնանի որդիներով,
Փիխագարձ այցելութեան եկաւ Պատրիար-
քարան:

● Ուր. 16 Օգոստ. — Ա. Աստուածածնայ
Տաճարի Տեսուչ Հոգէ. Տ. Վաչէ Արդ. ի կամա-
տիսնեան նշանակուեցաւ Հոգեւոր Հոգիւ Ամ-
մանի և ըրջակայից, փոխան Հոգէ. Տ. Անու-
շաւան Վրդ. Զղջանեանի որ վերագարձաւ Ա.
Աթոռ, ուր պիտի ստանձնէ զասեր Ժառանգ.
և Ա. Թարգմանչաց վարժարաններու մէջ:

● Կիր. 25 Օգոստ. — Կէսօրէ հարք, Ա. Ուխ-
տիս երիսասարդ Միարաններէն Հոգէ. Տ.
Փառէն Արդ. Աւետիքեան ճամբար ելաւ գէպի
Ամերիկա, կատարելագործելու իր ուսումը:

